



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵԺ ԼՐԱՏՈՒ

Ի՛է տարի

ԹԻՒ 1

Բարի Մեմանք եւ օրհնաբեր Առաք Տնունք

ՀԱԳ-ի մեծ ընտանիքի մէն
մի անդամին եւ բարեկամին,
«Լրատու»-ի բոլոր հետեւորդներուն
կը մաղթեմ ամենայն բարիք. մեր Տիրոջ
շնորհաբաշխ օրհնութիւնները իւրաքանչիւրիդ
անձնական, ընտանեկան եւ հանրային
կեանքին մէջ թող վերածուին արդիւնաւէտ
աշխատանքի, որ դառնայ բարիք ձեր ու մեր
շրջապատին:

Արմէն Իւրնէշեան, (բգթ)
Տնօրէն

Ձեզ տօններուն առիթով
լաւագոյն բարեմաղթութիւններս
լիբանանաբնակ եւ աշխարհացիի
մեր շրջանաւարտներուն եւ նախկին
աշակերտներուն: Յատուկ շնորհակալութիւն
դպրոցին հետ կապ պահողներուն,
նաեւ՝ բարոյական եւ նիւթական
աջակցութիւն ցուցաբերողներուն:

Դոկտ. Զաւէն Մարրեան
Պատուակալ Տնօրէն

The Armenian Evangelical College
stands for "life and more, abundant life"
through educating God's most precious creation,
the human soul, mind and body...
as instructed by our Lord Jesus Christ,
whose incarnation we celebrate at Christmas,
*A sacred Christmas, and an abundant 2026 to all....
near and far... but all in our hearts,
past, present and future...*

Nercess Baghdoyan
BoT Chairperson

Ամենակալ Աստուած
իր համեատ ծնունդով իսկ
փոքրութիւնը ընտրեց՝
անդարձ կերպով փոխելով
աշխարհիկ մեծութեան չափանիշը:
Թող այս ճշմարտութիւնը նրբօրէն
քանդէ մեծութեան ամէն կեղծ չափանիշ
եւ մեր կեանքներուն մէջ հաստատէ
ճառայելով մեծապաւ շնորհքը:

Վեր. Ժիրայր Ղազարեան
Հովիւ



▶ Ա. Ընդհանուր ուսուցչական ժողով

12 Սեպտեմբեր 2025-ին, ամառնային արձակուրդին ետք, կրկին համախմբուեցանք մեր Ա. Ընդհանուր ուսուցչական ժողովին համար: Աղօթքին ետք տնօրենը ջերմորեն ողջունեց ուսուցիչները եւ առաջնորդեց ժողովը: Կրթական խորհրդատու դոկտ. Թալին Մարդեան վարեց շատ օգտակար եւ ներգրաւիչ աշխատանիստ մը մեր ուսուցիչներուն համար:



▶ Վերամուտ 2025-2026

ՀԱԳ-ի 103-րդ վերամուտը տեղի ունեցաւ 18 Սեպտեմբերին (մանուկները՝ 22-ին) մեծ խանդավառութեամբ, մանաւանդ որ անցնող դժուար տարիէն ետք 25 նորեկ աշակերտներու գալուստով բարձրացաւ աշակերտութեան թիւը: 19 Հոկտեմբերին ունեցանք առաջին աշակերտական՝ վերամուտի պաշտամունք:



▶ Շրջանաւարտներու Այցելութիւն

19 Սեպտեմբերին մեծ ուրախութեամբ հիւրընկալեցինք մեր շրջանաւարտները ԱՄՆ-էն՝ տղքթ. Վաղինակ Դարբինեանը (1965. շրջ), տիկ. Պերճուհի Կիւլեսէրեանը (1965. շրջ) եւ պրն. Մորիս Կիւլեսէրեանը (1959 շրջ.): 11-րդ եւ 12-րդ դասարանի աշակերտները շատ հաճելի ժամանակ անցուցին անոնց ընկերակցութեամբ՝ պատմութիւններ փոխանակելով եւ վայելելով մեր երեք աշակերտներու գեղեցիկ երաժշտական կատարումը:

► Սրբոց թարգմանչաց տօն

Ուրբաթ, 10 հոկտեմբերին ամբողջ դպրոցով նշեցինք Սրբոց թարգմանչաց տօնը: Աշակերտներ իրենց ասմունքով, երգով եւ խօսքով փառաբանեցին մեր մայրենին: Օրուան պատգամաբերն էր հոգշ. Հ. Աբրահամ արեղայ Ճուլֆայեան, որ շատ հաղորդական ոճով բացատրեց օրուան խորհուրդը, եւ թէ այն ինչ թելադրականութիւն ունի այսօր:



► «Սրտի ներդաշնակութիւն. ձայն եւ կիթառ» համերգ

Կիրակի, 19 հոկտեմբերի երեկոյեան ժամը 7:00-ին, ՀԱԳ-ի կազմակերպումով եւ Լիբանանի պետական երաժշտանոցի նախագահ դոկտ. Հիպա Քաուասի հովանաւորութեամբ Պէյրութի Հայ անտարանական առաջին եկեղեցին մէջ տեղի ունեցաւ երաժշտական բացառիկ երեկոյ մը՝ Կիթառի միջազգային օրուան առիթով: Սովորանօ Լիանա Միքայէլեան եւ կիթառահար Մկրտիչ Միքայէլեան ներկայացուցին եւրոպական եւ հայկական դասական ու ժողովրդական երգարուեստի նմուշներ: Թէ՛դոկտ. Հ. Քաուաս, թէ՛ ՀԱԳ հոգաբարձութեան ատենապետ Ներսէս Պաղտոյեան իրենց սրտի խօսքերուն մէջ դրուատեցին Միքայէլեան ամուլին արհեստավարժ ներկայութիւնը լիբանանեան երգարուեստի դաշտին մէջ եւ քաջալերեցին անոնց նուիրումն ու սէրը:



► National Educational Conference 2025

30 Հոկտեմբերին եւ 1 Նոյեմբերին ուսուցչակազմը մասնակցեցաւ Լիբանանի անտարանական վարժարաններու համախմբումին կազմակերպած կրթական համագումարին: Նոյն ծիրէն ներս 12-րդ դասարանի աշակերտներ մասնակցեցան սեմինարի մը, ուր տարբեր ոլորտներէ մասնագէտներ աշակերտութեան ներկայացուցին ուսուցչական ասպարէզի մարտահրաւերները, առաւելութիւնները եւ ապագայ կարելիութիւնները:



► «Մանուկներու Աստուածաշունչը միասին կարդանք եւ պատմենք»

Երկուշաբթի, 3 Նոյեմբերին ՀԱԳ այցելեցին Արաբական Ծոցի Աստուածաշունչի ընկերութեան ընդհանուր քարտուղար դոկտ. Հրայր Ճէպէճեան եւ դոկտ. Արտա Պոյնէրեան-Ճէպէճեան, որոնք աշակերտներուն խօսեցան նոր հրատարակուած «Մանուկներու Աստուածաշունչը միասին կարդանք եւ պատմենք» գիրքին մասին եւ 4-րդէն 7-րդ դասարանի աշակերտներուն բաժնեցին գիրքէն օրինակներ:





▶ Այցելություններ

Հորեքշաբթի, 12 Նոյեմբերին ՀԱԳ այցելեց Անրա-սեյի հայ ատետ. եկեղեցույ հովիւ վեր. Յակոբ Զո-ղանճեան, որ Լիբանան կը գտնուի Հայ ատետ. Էմմանուէլ եկեղեցույ հրաւերով:

Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2025-ին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան եւ անդամ՝ Արամ Սոմունճեան այ-ցելեցին դպրոց, ուր հանդիպում մը ունեցան դոկտ. Արմէն Իւրնէշլեանի, վեր. Ժիրայր Ղազար-եանի եւ պրն. Ներսէս Պաղտոյեանի հետ:



▶ Diva's Exhibition

14 Նոյեմբերին խումբ մը ուսուցիչներ միասնաբար ընկերային պահ մը ունեցան այցելելով Սուրսոք թանգարան, ապա գաւաթ մը սուրճի շուրջ հետաքրքրական զրոյց ծաւալեցին՝ հեռու դպրոցի առօրեայէն:



▶ Համայնքային ծառայութեան ծրագիր

ՀԱԳ-ի 10-րդ եւ 11-րդ դասարաններու Համայնքային ծառայութեան ծրագիրը մեկնարկեց բացատրողական դասախօսութեամբ մը, որ ինչպէս միշտ մեծ խանդավառութեամբ եւ ձեռնհասութեամբ վարեց դպրոցիս լաւ բարեկամ դոկտ. Շաղիկ Գանտահարեան-Խիւտա-վերտեան: Ան խօսեցաւ «Տարեցներու աշխարհը» նիւթին շուրջ՝ նա-խապատրաստելու համար աշակերտները տարեցներու հետ կատարուելիք համայնքային ծառայութեան իրենց աշխատանքին:

Շնորհակալ ենք դոկտ. Խիւտավերտեանէն եւ յաջողութիւն կը մաղթենք մեր աշակերտներուն զիրենք սպասող նոր փորձառութեան մէջ:



▶ Լիբանանի անկախութիւն

Լիբանանի անկախութեան տօնին առթիւ 7-րդէն 11-րդ դասարանի աշակերտները 20 նոյեմբերին իրենց ուսուցիչներուն ընկերակցու-թեամբ այցելեցին Կեդրոնական Պէյրութ՝ ծանօթանալու քաղաքին հնագիտական ու պատմական վայրերուն: Իսկ յաջորդ օրը, ամբողջ դպրոցը տարբեր ձեւերով նշեց այս կարեւոր տօնը, ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը դպրոցէն ներս:



► Մտերմիկ Նախաճաշ

Չորեքշաբթի, 26 նոյեմբերին ՀԱԳ-ի Տիկնանց ընկերային յանձնախումբը տօնական նախաճաշի սեղաններու շուրջ համախմբած էր դպրոցի ծնողներ, բարեկամներ եւ հիւրեր: Սիրուած երգերով ելոյթ ունեցաւ Սպիտակ նուագախումբը, որուն մաս կը կազմեն մեր շրջանաւարտ Անթոնի Օպէյտը եւ աշակերտներ՝ Գէորգ ու Հրակ Պալեանները: Երգիչին ընկերակցեցան նաեւ տիկիները, իսկ Կահանդ պապան ու նախակրթարանի փոքրիկները աւելիով ճոխացուցին մթնոլորտը:

Վարձքը կապար բոլոր աշխատող տիկիներուն եւ ներկաներուն:



► Ա. Ծնողաց ժողով

28 նոյեմբերին ունեցանք մեր առաջին Ծնողական ժողովը, որուն ընթացքին, ըստ սովորութեան տրուեցաւ մանկավարժական դասախօսութիւն մը: Սոյն ժողովին դասախօսեցին հոգեբաններ Միրիամ Իտ եւ դոկտ. Շարլոթ Էլ Խալիլ, որոնք խօսեցան տունէն ներս զաւակներու հետ դրական վերաբերմունքի կարեւորութեան մասին: Տնօրէնը յանձինս հիւրերուն, յուշանուէրով մը պատուեց Rise Above Bullying կազմակերպութիւնը:



► Christmas Celebration

Դեկտեմբեր 6-ին դպրոցին կազմակերպութեամբ եւ տիկնանց օժանդակ ու ընկերային եւ ծնողաց յանձնախումբերուն աջակցութեամբ տեղի ունեցաւ Կահանդի ճոխ նախատօնակ: Ելոյթ ունեցան 3-րդ – 6-րդ դասարանի աշակերտական երգեցիկ խումբը եւ դպրոցի նուագախումբը:





Աւարտական կարգի աշակերտուհի **Անտրիա Տեմիրճեան** Լիբանանի երիտասարդական նուագախումբին հետ իբր առաջին ջութակ ելոյթ ունեցաւ Մոսկուայի միջազգային փառատօնին: Հպարտ ենք իրմով եւ կը մաղթենք յարատեւ վերելք եւ նորանոր բեմերու նուաճում:



Դոկտ. Սիլվա Սայիլեան
Առողջ արտաքննապէս եւ ներքնապէս
Օրդ. Նանի Գալուստեան - Առողջ Սնունդ



Պր. Վաչէ Քէշիշեան
Հրդեհի դէմ միջոցառումներ



Պր. Կերի Լեփեճեան (2018-ի շրջ.)
Մարզանք եւ մտային առողջութիւն
Հայկազեան համալսարան - Orientation

Հոգաբարձուքիւնք թիրախային ծրագրումով կ'աշխատի մանկապարտեզի բարելաւումին ու այնտեղ կատարուող աշխատանքներու հանրայնացումին ուղղութեամբ:

Կը ներկայացնենք անոնցմէ փունջ մը.



Տիկ. Սրին Պաղտոյեան Բերքեզեան



Մեծ հայրերու ու մեծ մայրերու պատուով





Գիտության դասը
բնութան մեջ



▲ Տարրալուծարանին մեջ

▼ Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ



▲ Շրջանաւարտիցի Cake Sale

▼ Robotics



Կրօնագեղծի
քաղցկեղի դէմ արշաւ



New Heights Lebanon



Այցելութիւն
Էլի Սաաաիի
արուեստանոց



Ճանչնանք բնութիւնը

Made by nature
Botanical Garden-ին մեջ



Մասնակցութիւն AUB STEM Fair-ին





Դոկտ.Վահան Զանոյեան (1968-ի շրջ.) Երևանի մեջ հրատարակած է «Հայկական Իրավիճակը 2016-2025» 222 էջնոց գիրքը, որ կը պարունակէ նշուած ժամանակաշրջանի իր յօդուածները և հարցազրոյցները:



ԼՍԳ-ի գեղարուեստից վաստակաւոր ուսուցիչ պր. Վազգէն Միողալեանի բեմադրութեամբ ՀԵԸ-ի Վահրամ Փափագեան թատերախումբը ներկայացուց «Թռչող Հայրիկը» թատերգութիւնը, որուն մէջ փոքր դեր մը ունէր բժշկութեան ուսանող Հրակ Մամիկոնեան (2023-ի շրջ.), որ նաև ներկայացման բեմավարն էր:



18 Հոկտեմբեր 2025-ին Լոս Անճելըսի Զօնաթան Քլապին մէջ Ամերիկայի հայ անտարանչական ընկերակցութեան 106-րդ ընդհ. Ժողովին Անտարանչականի նախկին նախագահ տորթ. Նազարէթ Տարագճեան (1970-ի շրջ.) պատուօրհան իր նուիրեալ ծառայութեան համար: Կազմակերպիչ մարմինի անդամներէն էր տիկ. Հելկա Սարգիս (1971-ի շրջ.) իսկ խօսք առնողներէն էր AMAA-ի վարիչ-տնօրէն Սերժ Պաքճեան (1971-ի շրջ.): Բժիշկներ Նազարէթ և Անի Տարագճեաններ պարգևատրուեցան յուշանուէրով:



Վաչէ Պարսումեանի (1971-ի շրջ.) Լոս Անճելըսի մէջ աշխուժ գործունէութիւն ծաւալող «Լարք» երաժշտական ընկերակցութեան հիմնադրութեան 35-ամեակի տօնակատարութիւնը կայացաւ 5 Հոկտեմբեր 2025-ին: Ի շարս այլոց, յայտագրին մասնակցած է «Լարք»-ի երգչախումբը և սիմֆոնիք նուագախումբը ղեկավարութեամբ մայէսթրօ Կարօ Անեսեանի (1998-ի շրջ.):

2 Հոկտեմբեր 2025-ի «Ազդակ» օրաթերթի գաղութահայ լուրերէն տեղեկացանք թէ Ալպեր Պէզճեան (1957-ի շրջ.), որպէս Լոս Անճելըսի Համագայինի կեդրոնատեղիին հիմնական բարերար, իր տիկնոջ՝ Թերիի հետ, պարգևատրուած է Համագայինի կեդրոնական վարչութեան շքանշանով:



Լոնտոնի Բրիտանական անուանի գրադարանը դոկտ. Մայքըլ Էրտմէնի գլխաւորութեամբ, և գործակցութեամբ Լոնտոնի մէջ Հայաստանի դեսպանութեան, 27 Սեպտեմբեր 2025-էն 22 Փետրուար 2026 կազմակերպած է «Բրիտանահայ» ցուցահանդէսը: Ցուցահանդէսին շնորհակալիքի բաժնին մէջ նշուած է դոկտ. Զաւէն Մարդեանի (1955-ի շրջ.) անունը որպէս 8 օժանդակողներէն երրորդը:



Տորթ. Վիգէն Ահարոնեան (1967-ի շրջ.) և իր տիկինը՝ Սօսի (1969-ի շրջ.), իրենց հօր՝ վեր. Յովհաննէս Ահարոնեանի, յիշատակին վերանորոգեցին Հայ անտ. առաջին եկեղեցւոյ դահլիճը: Բացումը տեղի ունեցաւ 27 Սեպտեմբեր 2025-ին, որու ընթացքին տեսաուղերձով ելոյթ ունեցաւ տորթ. Ահարոնեան:

20 Սեպտեմբեր 2025-ին, կազմակերպութեամբ Միւսա Լեո միութեան Փասատենայի վարչութեան, Ճիվելեկեան երիտասարդական կեդրոնին մէջ մեծ հանդիսութեամբ նշուեցաւ Միւսա Լեոյի հերոսամարտի 110-ամեակը: Օրուան բանախօսն էր դոկտ. Վահրամ Շէմմասեան (1969-ի շրջ.):



14 Սեպտեմբեր 2025-ին Մոնրէալի Հայ անտ. առաջին եկեղեցւոյ մէջ կազմակերպուած է կրթութեան և անհատական զարգացման տօնակատարութեան հանդիսութիւն մը: Գլխաւոր բանախօսը եղած է վեր. Յակոբ Ազպաշարեան: Խօսք առած են նաև, AMAC-ի ատենապետ Ռաֆֆի Շնորհօք-



եան (1989-ի շրջ.) և AMAA-ի Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսիսյան (ՀԱԳ-ի երկարամյա նախկին աշակերտ):



1965-ի շրջանաւարտ դասարանի պէյրութաբնակներ և ԱՄՆ-էն դէպի Հայաստան իրենց երթին Պէյրութ գտնուողներ, Աշրաֆիէի Նի ճաշարանին մէջ հաւաքական նախաճաշ մը ունեցած են 20 Սեպտեմբեր 2025-ին:



11 Սեպտեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 6-ին Պէյրութի LT Art Gallery-ին մէջ տեղի ունեցաւ արուեստագէտ Ճէյմս Տէրրմենճեանի (2013-ի շրջ.) գործերու ցուցահանդէսը, որ արժանացաւ գնահատանքի:



24 Օգոստոս 2025-ին Կլենտելի Հիլթըն պանդոկին մէջ Ոսկրածուծի նուիրատուներու հայկական հիմնարկը իր 26-րդ տարեդարձը տօնած է: Բացումը կատարած է ՀԱԳ-ի երկարամյա նախկին աշակերտ, Ամերիկահայ բժշկական Միջազգային ընկերակցութեան նախագահ տոքթ. Վիգէն Սէփիլեան:



ՀԲԸՄ-ի Լոս Անճելըսի «Հայ Կին» միաւորը 2 Օգոստոս 2025-ին «Հնչիւններ և քայլեր» խորագրին տակ նշեց հայ երաժշտութեան աւանդոյթները: Ելոյթ ունեցողներուն մէջ էր Լոս Անճելըսի Թէքէեան Մշակութային Միութեան վարիչ քարտուղար տիկ. Մայտա Քիւրճեան (1978-ի շրջ.):

19 Յունիս 2025-ին Պէյրութի ամերիկեան համալսարանը 1975-ի, 2000-ի և 55 տարիներէ ի վեր իր շրջանաւարտները պատուեց համալսարանի Էսեմպլի Հոլին մէջ յատուկ հանդիսութեամբ:

Պարգևատրուողներուն մէջ էին Կարօ Դանիէլեան (1965-ի շրջ.) Գրիգոր Սատրքեան (1962-ի շրջ.) և դոկտ. Զ. Մարտեան (1955-ի շրջ.):



18 Յունիս 2025-ին Քալիֆորնիոյ Նորթրիճ համալսարանի դասախօս դոկտ. Վահրամ Շենմասեան (1969-ի շրջ.) իր երկարամեայ գիտական ու հաւաքական գործունէութեան ընթացքին մէկտեղած արխիւային նիւթեր նուիրեց Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին:



15 Յունիս 2025-ին, Հալէպի ՍԳՀԿ Տխրունի ուսանողական միութեան կազմակերպած Քսան կախադաններու նահատակութեան 110-ամեակի ոգեկոչումի բանախօսն էր ՀԱԳ-ի նախկին աշակերտ, «Արարատ» օրաթերթի տնօրէն Նազարէթ Ճերեճեանը:



7 Յունիս 2025-ին Լոս Անճելըսի Նոր Մերունդ մշակութային միութիւնը իր հիմնադրութեան 70-ամեակի հանդիսութիւններու ծիրէն ներս ճաշկերոյթ մը կազմակերպեց ՀԿԲՄ-ի սրահին մէջ, որուն ընթացքին պարգևատրուեցան խումբ մը անդամներ, որոնց մէջ էր Յարութ Տէր Դանիսեան (1971-ի շրջ.):



ԲԱԽՏԱԽՈՐՈՒԹԻՒՆ

- 2007-ի շրջանաւարտ Կարօ Քէօրքիսեան և կինը բախարատրուած են դաստիարակ մը՝ Կաէլ, (Պէյճիքա):
- 2014-ի շրջանաւարտուհի Մարինա Քէշիշեան և ամուսինը նոյեմբեր 2025-ին բախարատրուած են մանչ զաւակով մը՝ Քրիս (Լիբանան):

ՆՇԱՆՏՈՒՔ

- 2014-ի շրջանաւարտուհի Կարին Արամեան 13 Ապրիլ 2025-ին Պէյրութի մէջ նշանուած է Ճոնի Համաթիի հետ:
- 2016-ի շրջանաւարտ Նարեկ Տէրտէրեան նշանուած է օրդ. Սապրինա Սիրապոնեանի հետ, 10 Մայիս 2025-ին, Լոս Անճելըսի մէջ:

ՊՍԱԿ

- 2015-ի շրջանաւարտուհի Գարէն Քիւրճեան պսակուած է քանադարական Հրակ Խ. Տէրտէանի հետ 3 Օգոստոս 2025-ին Անթիլիասի մայր տաճարին մէջ:

ԻՐԵՆՑ ՅԱԽԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՄՏԱՆ...



† 1971-ի շրջանաւարտ, նախկին նախարար **գոր. Փանոս Մանճեան** (ծնեալ 1952) մահացաւ 7 Հոկտեմբեր 2025-ին յետ անողոր հիւանդութեան: Զինուորական պարիւններով յողարկատրուեցաւ Այնճարի մէջ:



† ՀԱԳ-ի Պէյրութի շրջ. միութեան նախկին վարչական, 1955-ի շրջանաւարտուհի **Ազնի (ծն. Աւագեան) Եղբայրեան** (ծն. 1937) մահացած է 12 Նոյեմբեր 2025-ին Նիւ Զրրզիի մէջ՝ յետ երկարամիջ հիւանդութեան:

† 1963 – 1978 տարիներուն փոքր ընդմիջումով ՀԱԳ աշակերտած **Գևո-Ժան Այվազեան** (ծն. 1959) 3 Նոյեմբեր 2025-ին Պրումանսայի մէջ մահացած է սրտի տագնապով:



† 1962-ի շրջանաւարտ դեղագործ դոկտ. **Ջորճ Այսիլեան** (ծնեալ 1945) 23 Յուլիս 2025-ին Շիքակոյի մէջ մահացած է՝ յետ անողոր հիւանդութեան:



† 1968-ի շրջանաւարտ, ՀԱԳ-ի Արևմտեան Ափի շրջ. միութեան երբեմնի ժրագան գանձապահ ժամագործ **Մարտիրոս Մարգարեան** (ծնեալ 1947) մահացած է 8 Օգոստոս 2025-ին Լոս Անճելոսի մէջ:



† 1991- 1993-ի ՀԱԳ-ի մարզանքի ուսուցիչ **Կարո Տօներեան** (ծնեալ 1961) յանկարծամահ եղաւ 11 Օգոստոս 2025-ին Պէյրութի մէջ:

† 1957-ի շրջանաւարտուհի, ՀԱԳ-ի Պէյրութի շրջ. միութեան նախկին վարչականուհի **Սանուշակ Մահսերեճեան-Նաֆահ** (ծնեալ 1938) մահացաւ Օգոստոս 2025-ին, Պէյրութի մէջ:

† 1978-ի շրջանաւարտ **Վահէ Պողարեան** (ծնեալ 1961) յետ երկարամիջ հիւանդութեան մահացած է Թեքսասի մէջ:

† 1972-75-ի ՀԱԳ-ի նախկին աշակերտ **Յովսէփ Խաչերեան** (ծնեալ 1958) մահացաւ 27 Յունիս 2025-ին Պէյրութի մէջ:



† 6 Ապրիլ 2025-ին Լոս Անճելոսի մէջ մահացած է 1950-ականներու սկիզբի ՀԱԳ-ի նախկին երկարամեայ աշակերտ **Ժան Բէօշկէրեան**:



† Մեծ յապաղումով լսեցինք, որ 1956-ի շրջանաւարտ, նախկին լիբանանահայ անուանի սրտաբան **տոքթ. Ստեփան Ենիգոմուշեան** (ծնեալ 1939), մահացած է 19 Յունիս 2023-ին, Լոս Անճելոսի մէջ՝ յետ երկարամիջ հիւանդութեան:






▲ Նախապատրաստության տունկան տրամադրության Այցելության Elf Town



▼ Այցելության Santa's House - Cotton Wood Park



▼ Brownie decoration



ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ 100.000 ՏՈՒՆԻ Գ. ՅԱՏԿԱՑՈՒՄԸ ՀԱԳ-ԻՆ

ՀԱԳ-ի մեծագույն բարերար եւ նախկին երկարամեայ աշակերտ տիար Ռաֆֆի Մանուկեան, համաձայն դպրոցի հարիւրամեակի իր հրապարակային խոստումին, իր մէկ միլիոն տոլարի յատկացումին երրորդ մասը՝ 100,000 տոլար, փոխանցեց դպրոցին:

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք ազնիւ բարերարին:

Տարեկան յատկացումներ

ՏԻԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ	20763
ՏԻԱՐ ՀՐԱԶ ՍԻՍԵՌԵԱՆ՝ ԾԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԲԱՐԻ ԱՄԱՆԴՈՅԹԸ	15000

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւէն ի վեր հետեւեալ նուիրատուութիւնները շնորհակալութեամբ ստացուած են:
Նուիրատուութիւնները տոլարով են

Lebanese Ladies Cultural Society	7500
Վերոյիշեալ գումարին 5000 տոլարը տրամադրուած է շրջանաւարտ Օրդ. Մարի Լուիզ ՄԷՆԷՇԵԱՆԻ կողմէ	
Շրջանաւարտ Վիգէն Գրաճեան	2500

ԱՄԱԱ-ի կողմէ

Endowment Fund-ի յատկացում	19511
Փիլիպոսեան ֆոնտ	7157
Անմիջական օգնութիւն 2024-25-ի Դ. եռամսեակ	4473
Անմիջական օգնութիւն 2025-26-ի Ա. եռամսեակ	4958
Դպրոցի բարելավման յատկացում	1788
2024-25-ի Դ. եռամսեակի յատկացում	1725
2025-2026 Ա. եռամսեակի յատկացում	500
Լոս Անճելոսի Հայ Աւետ. Ժողովական եկեղեցի	2100

Ի պատիւ Սօսի Մեսրոպեանի

Շրջանաւարտ Յարութ Մեսրոպեան	300
-----------------------------	-----

Դոկտ. Ճորճ Այնիլեանի յիշատակին

Տիկ. Քաթրին Այնիլեան	3000
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Սանտրա Այնիլեան	100

Որպէս ընդառաջում պատուակալ տնօրէնի կողմէ

Շրջանաւարտ Տօքթ. Հրաչ Սվաճեան	1500
Շրջանաւարտ Առնոլտ Պապիկեան	1000
Շրջանաւարտ Տիկ. Արփի Սարեան	500
Շրջանաւարտ Յարութ Մեսրոպեան	400
Շրջանաւարտ Տիկ. Անի Էլեգեան-Արթինեան	200

ԱՅԼ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծնողք Տիար Թոնի Սամահա	2000
ՀԱԳ Տիկնաց Ընկերային Յանձնախումբ	100
<i>Ի յիշատակ Վարուժ Ժամկոչեանի</i>	
Անանուն շրջանաւարտ	100

Խմբագիր՝
 Խորհրդատուներ՝
 Էջադրում՝
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԻՅԱՐԱԿԱՅԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՏՈՐԵԱ ՌԱԿՏ. ԱՐԱՄԵԱ ԻՐԱՆԵՇԵԱՆ
 ՏԻԱՐ ՆԵՐՍԵԱ ՊԱՏՈՅԵԱՆ
 ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 ԱՆԻ ՔԵՍԵՆԵԱՆ ՊԱՄԵՐ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College